



Ի. ՏՈՒՐԳԵՆԵՎ

ՓՐԵԶՈՒԿ

891.71.5
S - 96

ՊԵՏՀՐԱՏ

2011-05

891.715
ՀՍ- 96

Ի. ՏՈՒՐԳԵՆԵՎ

ԲԻՐՅԱՆԻԿ

Թարգմանեց Ս. ԶՈՐՅԱՆ
Նկարները՝ Ս. ԴԱՎԻԴՈՎԱՅԻ

ՊԵՏՐԱՍ
ՀԱԿԱՑՄԱՆ ԿԱ ԿԻՑ ՄԱՆԿՈՎԱՆԵԿԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԲԱԺԻՆ
ՅԵՐԵՎԱՆ
1938

24 JUŁ 2013

3999



Յերեկուան մեն-մենակ լեռանդակով վերադառնում
ելի վորսից։ Մինչև տուն դեռ ութ վերստ կար։ Ի՞ լավ
մատակ ձին աշխուժ վագում եր փոշոտ ճամփով, լերբեմն
փնչացնելով ու ականջները շարժելով։ Հոգնած շունս,
կարծես կապկած, վոչ մի քայլ յետ չեր մնում յետին անիվ-
ներից։ Փոթորիկ եր պատրաստվում։ Առջես՝ մի ահա-
զին մանիշակագույն ամպ դանդաղորեն բարձրանում եր
անտառի յետեկից։ Գլխավերեկից անցնում և գեմս ելին
գալիս յերկարավուն, մոխրագույն անպեր. թփերն ահով
որորվում ելին ու սվավում։ Հեղձուցիչ ոդը փոխվեց հան-
կարծ խոնավ սառնության. ստվերները թանձրանում
ելին։ Յերասանակը խփեցի ձիուն, իջա ձորը, անցա ցա-
մաքած գետը, վորի շուրջն աճել ելին ուռենու թփեր,
բարձրացա սարը և մտա անտառը։ Ճանապարհը գնում եր
տիլի խիտ թփուտների միջով, ուր արդեն տիրում եր
մութը. առաջ ելի գնում դժվարությամբ։ Յեռանդակը
թոշկոտում եր հարյուրամյա կաղնիների և լորենիների
պինդ արմատների վրայից, վորոնք կտրում ելին ճամ-
փան։ Ուժեղ քամին հանկարծ գրնգաց վերեռում, ծառերն
ալեկոծվեցին. անձրեսի խոշոր կաթիլները զարկեցին, թա-
կեցին տերևներին, կալծակը փալլատակեց և փոթորիկն
սկսվեց, Վարար անձրես թափվեց, Յես ձին քշեցի քայլով



3670
38

ու շուտով ստիպված լեղա կանգ առնել. ձիս խրվեց ցե-
խի մեջ, իոկ էս առջևս բան չեյի տեսնում: Մի կերպ
ապաստանեցի մի մեծ թփի տակ: Կուչ լեկած և յերեսո
ծածկած՝ համբերությամբ սպասում եյի անձրեսի կտրվե-
լուն, յերբ հանկարծ, կայծակի փայլով, աչքիս մի կեր-
պարանք յերեսաց ճամփի վրա: Ակսեցի ուշաղիր նայել
այն կողմը—նույն կերպարանքը կարծես դետնից դուրս
յեկավ, կանգնեց լեռանդակիս մոտ:

- Ո՞վ ե, —հարցրեց մի հնչեղ ձայն:
- Իսկ դու ով ես:
- Յես եստեղի անտառապահն եմ:

Յես անունս տվի:

- Հա, ճանաչում եմ. տո՞ւն եք գնում:
- Այո: Բալց տեսնում ես ինչ փոթորիկ ե...
- Այո, փոթորիկ ե, —պատասխանեց ձայնը:

Սպիտակ փալակը վոտից գլուխ լուսավորեց անտա-
ռապահին. դրան իսկուն հետեւց կայծակի շառաչուն ու
կարճ հարվածը: Անձրես կրկնապատկվեց:

- Շուտ չի կտրի, —շարունակեց անտառապահը:
- Ինչ տնենք հիմի:
- Յես ձեզ իմ խրճիթը կտանեմ, —ասաց նա:
- Բարի լեղիր:
- Համեցեք նստեք:

Նա մոտեցավ ձիու գլխին, սանձը բռնեց ու քաշեց:
Ճանապարհ ընկանք: Յես բռնեցի յեռանդակի բարձը, վոր
ոլորվում եր, «ինչպես նավակը ծովում», ու ձայն տվի
շանս: Խեղճ մաղյանս ծանր-ծանր վոտները խփում եր
ցեխին, սահում, գայթում. անտառապահը լծափայտերի
առաջ որորվում եր աջու ձախ, կարծես ուրվական: Գնա-
ցինք բավականին յերկար տեղ. վերջապես, առաջնորդա
կանգ առավ: «Բն' ը, տուն հասանք, աղա», —ասաց նա
հանգիստ ձայնով: Բակի դուռը ճոնչաց, մի քանի շանք


յակոտներ հաջացին միասին: Յես գլուխս բարձրացրի և,
փայլակի լույսով տեսա ընդարձակ բակի մեջտեղը մի
փոքրիկ խրճիթ. բակը շրջապատված եր ցանկապատով:
Լուսամուտներից մեկում աղոտ լույս եր փայլում. Անտա-
ռապահը ձին տարավ մինչև տան սանդուղները և դուռը
ծեծեց: «Իսկուն, իսկուն», —լավեց մի բարակ ձախն, դռան
յերկու տարեկան մի աղջիկ՝ կարճ շապիկ հագած, լապ-
տերը ձեռին յերեսաց շեմքում:

— Աղային լուս արա, — ասաց անտառապահը
նըան, — իսկ յես ձեր յեռանդակը ծածկի տակ կքաշեմ:

Աղջիկը նայեց ինձ ու մտավ խրճիթ: Յես հետեւցի
նըան:

Անտառապահի խրճիթը բաղկացած եր մի սենյակից՝
մըստած, ցածրիկ ու զատարկ: Մի պատուված մուշտակ
կախված եր պատից: Նատարանի վրա ընկած եր մի փո-
ղանի հրացան, անկյունում թափված եյին փալասներ.
յերկու մեծ պուտուկ զրված եյին փեշի կողքին: Սեղանի
վրա վառվում եր մարիս, վորի լույսը մերթ բարձրա-
նում եր, մերթ իջնում հանգչելու չափ: Սենյակի ուղիղ
մեջտեղը կախված եր յերեխայի ճոճը, վոր կապված եր
մի յերկար ձողի ծայրի: Փոքրիկ աղջիկը լապտերը հան-
գցըց, նստեց մի փոքրիկ աթոռի և սկսեց աջ ձեռքով
ճոճն որորել, ճախով մարխը շտկել: Նայեցի շուրջա, —սիրտս
ճմլվեց տիսուր բան և գիշերը գյուղացու խրճիթ մտնելը:
Յերեխան ճոճում շնչուս եր ծանր ու արագ:

- Դու ալստեղ մենակ ես, հարցըի աղջկան:
- Մենակ եմ, —պատասխանեց նա հաղիկ լսելի
ձայնով:
- Դու անտառապահի աղջիկն ես:
- Այո, — շնչաց նա:



— Դու այստեղ մենակ ես, — հարցրեց աղջկան:

Դուռը ճոնչաց և անտառապահը, գլուխը կոացնելով,
լոք տվեց շեմքից ներս: Նա լավտերը վերցրեց հատակից,
մոտեցավ սեղանին և վառեց:

— Ո՞վ գիտի, մարխին սովոր չեք, — ասաց նա ու
գլուխը թափ տվեց:

Նայեցի նրան: Այդպիսի կորովի մարդ շատ քիչ ելի
տեսել: Նա բարձրահասակ եր, թիկնեղ և փառավոր կազմը՝
վածքի տեր: Բաց շապկի տակից յերեռւմ եյին ուժեղ
մկանները: Մե գանգուր միրուքը կիսով չափ ծածկում եր
նրա մոռայլ ու առնական գեմքը. իրար կպած լայն
հոնքերի տակից — համարձակ նայում եյին փոքրիկ թուփ
աչքերը: Նա ձեռքը թեթևակի կանթեց մեջքին ու կանգ-
նեց առջև:

Յես շնորհակալություն հայտնեցի նրան և հարցրեց
անունը:

— Ինձ Ֆոմա լեն ասում, — պատասխանեց նա. — իսկ
ավելի անունս Բիրյուկ^{*)} ե:

— Ա՛, Բիրյուկը դժւ յես:

Յես կրկնապատիկ հետաքրքրությամբ նայեցի նրան:
Իմ վորսկան Յերմոլյայից և ուրիշներից շատ պատմու-
թյուններ եյի լսել անտառապահ Բիրյուկի մասին, վորից
շրջակա գյուղացիները վախենում եյին, ինչպես կրակից:
Նրանց ասելով՝ աշխարհում դեռ այդպիսի, իր գործին
հմուտ մարդ չի յեղել: «Մի շալակ ցախ չի թողնի տանեն
անտառից. ինչ ժամանակ ել լինի, թեկուզ կես գիշեր,
վրա լե համնում կարկուտի պես, և վալ նրան, ով հակա-
ռակեց, — ուժեղ ե, իբրև թե, ու սատանի պես ճարպիկ...
Յեվ վոչ մի բանով չի կարելի նրան կաշառել. վոչ ողիով,
վոչ փողով. վոչ մի բան նրան չի գրավում: Քանի անգամ
մարդիկ պատրաստվել են գլուխն ուտել, բայց չի հաջող-
վում»:

*) Բիրյուկ անվանում են մենակ, մոռայլ մարդուն: Նշա-
նակում ե և գայլ:

Ահա ինչպես ելին խոսում հարևան գյուղացիները
Բերդուկի մասին:

— Ուրեմն դու Բերդուկն ես, — կրկնեցի. — յես լսել
եմ քո մասին: Ասում են՝ վոչ մի մարդու չես խնայում:

— Իմ պաշտոնն եմ կատարում, — պատասխանեց նա
մոռայլ. — տիրոջս հացը ձրի չեմ ուտելու:

Նա կացինը հանեց զոտուց, նստեց հատակին և սկսեց
մարխը կտրել:

— Կին չունեմ, — հարցրի նրան:

— Չե, — պատասխանեց և կացինը վրա բերեց ու-
ժով:

— Մեռել ե, յերեի:

— Չե... հա... մեռել ե, — ավելացրեց նա ու շուռ
յեկավ:

Յես լոեցի. նա աչքերը բարձրացրեց ու նայեց ինձ:

— Փախավ մեր կողմերով անցնող քաղաքացու հետ, —
արտասանեց նա դաժան ժպիտով: Աղջիկը գլուխը կախ
զցեց. յերեխան զարթնեց ու ճշաց. աղջիկը մոտեցավ
ձոճին: — Առ, տուր իրան. — ասաց Բիրյուկը, աղջկա ձեռը
դնելով մի կեղտոտ ծծուկ: — Ար, սրան ել թողեց, — շարու-
նակեց նա կիսաձայն, յերեխային ցույց տալով: Քիչ հետո
նա մոտեցավ դռանը, կանգ առավ ու յետ դարձավ:

— Դուք, կարծեմ, աղա, — սկսեց նա, — մեր հացը չեք
ուտի, բայց իս հացից բացի...

— Յես քաղցած չեմ:

— Դե, ինչպես զիտեք: Սամավար կղնելի ձեզ հա-
մար, բայց թել չունեմ... Գնամ տեսնեմ ձեր ձին վ՞նց ե:

Նա դուրս գնաց և դուռը ծածկեց թրպպոյով: Յես
մի անգամ ել նայեցի շուրջս: Խրճիթն ինձ առաջվանից
ավելի տիսուր թվաց: Սառած ծխի դառը հոտը անախորժ
կերպով ճնշում եր շնչառությունս: Աղջիկը տեղից չեր

շարժվում և վոչ ել աչքն եր բարձրացնում. յերբեմն հրում
եր ճոճը և ամաչելով ուսին քաշում կախ ընկած շապիկը.
Նրա մերկ վոտները չելին շարժվում:

— Անունդ ի՞նչ ե, — հարցրի յես:

— Ուլիտա, — ասաց նա, ել ավելի քարշ գցելով իր
ախուր դեմքը:

Անտառապահը յեկավ և նստեց նստարանին:

— Փոթորիկն անցնում ե, — նկատեց նա, մի փոքր
լուսթյունից հետո. — յեթե կուզեք՝ յես ճամփա կցեմ ձեզ
մինչև անտառի պունկը:

Յես վեր կացաւ Բիրյուկը հրացանը վերցրեց և նա-
յեց վառարանին:

— Դա ինչու համար ե, — հարցրի յես:

— Անտառում անկարգություն են անում: Մադյանի
ձորում ծառ են կտրում, — ավելացրեց նա ի պատասխան
իմ հարցական հայացքին:

— Միթե ալստեղից լսելի յետ:

— Բակից լսվում ե:

Մենք միասին դուրս յեկանք: Անձրեւ կտրել եր:
Հեռվում դեռ կուտակված եյին ամպերի ծանր զանգված-
ներ, յերբեմն բռնկում ելին փալակները, բայց մեր
գլխավերեն արդեն տեղ-տեղ յերեռում եր մութ-կապույտ
յերկինքը, աստղերն առկայում եյին արագորեն անցնող
ցանցառ ամպերի միջից: Անձրեւ թրջված և քամուց
ալեկոծ ծառերի ուրվագծերը սկսեցին յերևալ խավարի
միջից: Ականջ դրինք: Անտառապահը գլխարկը վերցրեց
ու գլուխը կախեց: «Հը... հը, — ասաց նա հանկարծ ու
ձեռը մեկնեց, — տես, ինչ գիշեր ե ընտրել»: Յես, տերեկ-
ների աղմուկից բացի վոչինչ չելի լսում: Բիրյուկը ձին
դուրս քաշեց ծածկի տակից: «Յես եսպիսով, ով գիտի, —
ավելացրեց նա, — վրա չհասնեմ նրան»: — «Յես կգամ քեզ
հետ... մուղում ես»: — «Լավ, — պատասխանեց նա և ձին



Տես մի թրջված, ցնցոտիներով և յերկար, գղղղված
մորուքով գյուղացի

անկյունում... անձրել ծեծում եր տանիքը և իջնում լուսա-
մուտներից. մենք բոլորս լուռ ելինք։
— Ֆոմա Կուզմիչ, —խոսեց գյուղացին խուլ ու ընկըճ-
ված ձայնով. —այ Ֆոմա Կուզմիչ։
— Ի՞նչ ես ուզում։
— Բաց թող։
Բիրյուկը չպատասխանեց։
— Բաց թող... չքավոր մարդ եմ... բաց թող։
— Ճանաչում եմ ձեզ, —մռայլ վրա բերեց Բիրյուկը. —
ձեր սաղ գեղն եղաղես ա. —բոլորդ գող եք։
— Բաց թող, —կրկնեց գյուղացին. —աղքատ, որվա-
հացի կարոտ ենք... բաց թող
— Աղքատ եք... Վոչ ով գողություն անելու իրավունք
չունի։
— Բաց թող, Ֆումա Կուզմիչ... մեղք եմ։ Զեր կա-
ռավարիչը, ինքդ գիտես, հոգիս կհանի։
Բիրյուկը յետ դարձավ։ Գյուղացին գողում եր, տեսնդը
կարծես ցնցում եր նրան։ Նա գլուխը թափահարում եր
և ծանր շնչում։
— Բաց թող, —կրկնեց նա հուսահատությամբ, —բաց
թող, աստված վկա, ինչ արժի կտամ։ Աստված վկա, աղ-
քատությունից եմ արել... յերեխեքս սոված են, ինքդ գի-
տես։ Դժվար եմ ապրում։
— Բայց գողություն մի անի։
— Գոնյա ձիուս, —շարունակեց գյուղացին, —ձիուս
բաց թող... նրանով ենք ապրում... բաց թող։
— Ասում եմ՝ չի կարելի։ Յես ել ծառալող մարդ եմ.
ինձանից կպահանջեն։ Զեղպեսներին չպետք և յերես տալ։
— Բաց թող։ Կարիքն ստիպեց, Ֆոմա Կուզմիչ, կա-
րիքը, բաց թող։
— Գիտեմ ձեզ, գիտեմ։
— Դե, բաց թող։

— Դե, հանգիստ նստի, թե չե հո գիտես: Աղային շես
տեսնում, ինչ ե:

Խեղճը գլուխը կախեց... Բիրյուկը հորանջեց ու գլուխը
դրեց սեղանին: Անձրկը դեռ չեր կարում: Սպասում եցի
տեսնեմ ինչ ե լինելու:

Գլուղացին հանկարծ ուղղվեց: Նրա աչքերը բոցավառ-
վեցին և գեմքին կարմրություն յերեաց: «Դե առ, կեր,
խեղդվի, առ», — սկսեց նա, աչքերը կուչ ածելով և շրթունք-
ների ծայրերն իջեցրած, — «առ, անիծյալ հոգեհան, խմիր
քրիստոնյայի արյունը, խմիր»...

Անտառապահը շուռ յեկավ:

— Քեզ եմ ասում, քեզ, անխիղճ արնախում, քեզ:

Հարբած ես, ինչ ե, վոր ուշունց ես տալիս, — խոսեց
անտառապահը: — Խելքդ յետ ես տվել, ինչ ե:

— Հարբած... Մի քու փողով եմ հարբել, անիծյալ
հոգեհան, գազան, գազան:

— Հայ, դու... յես քեզ...

— Ինձ համար մին ա—կորչելու յեմ. ուր գնամ
առանց ձիու: Խփիր, միանգամից վերջացրու. սովից մեռած,
թե եղակս—մին ա: Թող ամեն ինչ կորչի կին, յերեխա
— բոլորը թող սատկեն.. իսկ դու, կաց, քեզ ել կտեսնենք:

Բիրյուկը վեր կացավ:

— Խփի, խփի, — ասաց գլուղացին մոլեգին ձայնով,
— խփի, խփի... (Աղջիկը վեր թուավ տեղից և աչքերը
հառեց նրան), խփի, խփի...

— Զենդ կտրի, — գոռաց անտառապահը և յերկու քայլ
արավ դեպի նա:

— Հերիք ե, հերիք ե, Թոմա, — գոռացի յես. — Թնդ
նրան... աստված նրա հետ:

— Զեմ կտրի, — շարունակեց գլուղացին: — Մին ա վոր
սատկելու յեմ: Հոգեհան, գազան, չես ել սատկում, պրծը-

նենք... Սպասիր հլա, թագավորությունդ լերկար չի քաշի.
բողազդ կլարեն, կաց հլա:

Բիրյուկը բռնեց նրա ուսը... Յես նետվեցի գյուղա-
ցուն ողնելու...

— Զեռմի տա, աղա, — գոռաց անտառապահն ինձ վրա:

Յես նրա սպասնալիքից չելի վախենա և արդեն ձեռս
պարզում ելի, բայց, ի մեծ զարմանու իմ, նա օի շարժումով
գոտին պոկեց գլուղացու արմունկներից, վզից բռնեց,
գլխարկն աչքերը կոխեց, գուռը բաց արավ ու դուրս
գցեց նրան:

— Գրողի ծոցը գնա ձիուդ հետ, — գոռաց նա գլուղա-
ցու յետեից. — Տես, մեկ ել վոր ձեռս ես ընկել...

Նա վերադարձավ խրճիթ և սկսեց անկյունում խառնել
ինչ-վոր:

— Ե՛, Բիրյուկ, — ասացի յես, վերջապես, — զարմացրիր
ինձ. ինչպես տեսնում եմ՝ դու լավ տղա յես:

— Ե, հերիք ե, աղա, — կտրեց նա խոսքս բարկու-
թյամբ, — մարդու բան չասեք: Ավելի լավ ե յես ճամփա
գցեմ ձեզ, — ավելացրեց նա, — չեք կարող սպասել յերկի,
մինչեւ անձրկը կտրի.

Բակում թխթխկացին գյուղացու սայլի անիմերը:

— Տես, գնաց, — քըթմնջաց անտառապահը, — բայց յես
նրան...

Կես ժամ հետո՝ նա հրաժեշտ տվեց ինձ անտառի
պոնկին:

Պատ. լոմբադիր՝ Մ. Կորյուն
Տեխ. խմբագիր՝ Ան. Քասպարյան
Սրբագրիչ՝ Թ. Հովհակիմյան
Կոնսըլ սրբագրիչ՝

Քլավլիտի լիազոր՝ Ղ-3579. Հրատ. 4233.
Պատվեր 215. Տիրաժ 4000.
Թուղթ 62×94 Տպագր. 1 մամ.
Մեկ մամ. 24,480 նշան. Հեղինակ. 1/2
Հանձնված և արտադրության Յ մարտի 1938 թ.
Ստորագրված և տպագրության համար 17 ապրիլի 1938 թ.
Գինը 45 կ.

Գետհրատի 1 տպարան, Ցերեան. Լենինի 65

ՀՀ Ազգային գրադարան



NL0391359

ԳԻՆԸ 45 ԿՈՊ.

350

5499

И. С. ТУРГЕНЕВ
БИРЮК
ГИЗ АРМ. ССР, ЕРЕВАН